ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 մայիսի 2015 թվականի N 59 Ա

2015Թ ՄԱՅԻՍԻ 15-ԻՆ <<ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՔՈԼԵՋԻ ՏԱՆԻՔԻ ՓԼՈՒԶՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ>> ԹԵՄԱՅՈՎ <<ԿԱՊԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2015թ հունվարի 29-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2015թ հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին>> N9-Ա որոշմամբ հաստատված պլանի 9-րդ կետի 9.1 ենթակետի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եվ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի ապրիլի 30-ի 2015թ N 20/132 զեկուցագրի, **որոշումեմ՝**

1. 2015թվականի մայիսի 15-ին անցկացնել <<Փրկարարական աշխատանքների կազմակերպումը քոլեջի տանիքի փլուզման դեպքում>> թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն <<Կապանի պետական բժշկական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում:
2. Ուսումնավարժության ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Ա. Հարությունյանին:
3. Ուսումնավարժության ղեկավար Ա. Հարությունյանին՝ ապահովել նախապատրաստական աշխատանքների իրականացումը, փաստաթղթերի մշակումը և ծանուցումը ուսումնական վարժության մասնակիցներին:
4. Ուսումնավարժությունում ընդգրկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչությունը, <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ Սյունիքի ԳԳՄ, ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժինը, <<Կապանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ, ՀՀ Սյունիքի մարզի <<Կապանի պետական բժշկական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը, <<Հայաստանի Էլեկտրական Ցանցեր>> ՓԲԸ <<Տաթև>> մասնաճյուղը:
5. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ. մայիսի 5